ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«25» նոյեմբերի 2016 թվականի № 116-Ն

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 20-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> ենթակետը, <<Արագած-Պեռլիտ>> ԲԲԸ-ի 2016 թվականի նոյեմբերի 21-ի <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման կողմից 01.11.2016թ.-ին կազմված թիվ 3-04 ակտի, նույն ակտի պարզաբանումների, հանձնարարական-ծանուցման, բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման թիվ 300003 ակտի, վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու մասին թիվ 3-04 որոշման և ստուգողների գործողությունների դեմ>> վարչական բողոքը, ղեկավարվելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, 37,38, 69-77 հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սույն բողոքով վարչական վարույթն իրականացնել հանձնաժողովի հետևյալ անդամներով՝

Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Գագիկ Սարգսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական

	ընդերքի տրամադրման գործակալության ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնական մատյանի վարման, հաշվառման, տեղեկատվության, հանքային հումքի տեսակների արտահանման և ընդերքի մասին տեղեկատվության արտահանման լիցենզիաների տրամադրման բաժնի պետի
Գագիկ Ադիբեկյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժնի պետ
Հրանտ Ավետիսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության օգտակար հանածոների պաշարների շարժի բաժնի գլխավոր մասնագետ
Շուշանիկ Քերոբյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության օգտակար հանածոների և ընդհանուր երկրաբանության բաժնի պետ
Գևորգ Հովսեփյան	<<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ-ի տնօրեն

2. Վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի նախագահին՝

1) իրականացնել վարչական վարույթ <<Արագած-Պեռլիտ>> ԲԲԸ-ի կողմից հարուցված՝ <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման կողմից 01.11.2016թ.-ին կազմված թիվ 3-04 ակտի, նույն ակտի պարզաբանումների, հանձնարարական-ծանուցման, բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման թիվ 300003 ակտի, վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու մասին թիվ 3-04 որոշման և ստուգողների գործողությունների դեմ>> վարչական բողոքի հիման վրա,

2) Վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին տեղեկացնել հարուցված վարչական վարույթի անցկացման տեղի, օրվա և ժամի մասին,

3) ապահովել վարչական բողոքով ներկայացված փաստաթղթերի տրամադրումը հանձնաժողովի անդամներին,

4) վարչական վարույթն իրականացնել ղեկավարվելով Օրենքի պահանջների ապահովմամբ,

5) անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին այլ անձի կարգավիճակով հրավիրել գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով համապատասխան մասնագետի,

6) արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ